ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ԵՎ ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԵՐ. ԾԱՂԿԱՁՈՐ – 2019



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս.թ. հոկտեմբերի 5-ին և 6-ին Հայաստանի շախմատի ակադեմիան կազմակերպում է **կայծակնային** և **արագ** շախմատի մրցաշարեր՝ նվիրված աշխարհի կրկնակի չեմպիոն Տիգրան Պետրոսյանի 90-ամյակին, որոնք տեղի կունենան Ծաղկաձորի Մարիոթ հյուրանոցում (ք. Ծաղկաձոր, Կոտայքի մարզ, ՀՀ):

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Մրցաշարերին կարող են մասնակցել առնվազն երկրորդ (II) շախմատային կարգ ունեցողները:
Մրցաշարերը կանցկացվեն շվեյցարական մրցակարգով. կայծակնայինը ՝ 11 խաղափուլով, արագը ՝ 8 խաղափուլով ՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների:

ԺԱՄԱԿԱՐԳ

Կայծակնային մրցաշար - 3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Արագ մրցաշար - 10 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը կորոշվեն ըստ՝

ա) հատված Բուխհոլցի (-1) գործակցի,

բ) Բուխհոլցի գործակցի,

գ) սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,

դ) հաղթանակների առավելագույն քանակի,

ե) անձնական հանդիպման արդյունքի (գործում է միայն այն դեպքում, երբ հավասար միավորներ վաստակած բոլոր մասնակիցները խաղացել են միմյանց դեմ):

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ԵՎ ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԵՐ. ԾԱՂԿԱՁՈՐ – 2019

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կայծակնային - 05.10.19	ժամը 12:00 – 14:30	1 - 6 խաղափուլեր
	ժամը 15:30 – 18:00	7 - 11 խաղափուլեր
Արագ - 06.10.19	ժամը 10:00 – 13:30	1 - 5 խաղափուլեր
	ժամը 14:30 – 17:00	6 - 8 խաղափուլեր
Մրցաշարերի փակման արարողություն – 06.10.19	ժամը 17:30	

ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ

Մրցանակային ֆոնդը կազմում է 2 000 000 ՀՀ դրամ:

Հիմնական մրցանակներ

Անվանում	I	II	III	IV	V
Կայծակնային	250 000	170 000	120 000	90 000	70 000
Արագ	250 000	170 000	120 000	90 000	70 000
Ընդհանուր հաշվարկ	80 000				

Հատուկ մրցանակներ – Լավագույն արդյունք

Անվանում	Կանանց	Մինչև 2300 ազգային վարկանիշ ունեցողների	Մինչև 2150 ազգային վարկանիշ ունեցողների	Մինչև 2000 ազգային վարկանիշ ունեցողների
Կայծակնային	50 000	50 000	50 000	50 000
Արագ	50 000	50 000	50 000	50 000
Ընդհանուր հաշվարկ	30 000	30 000	30 000	30 000

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ԵՎ ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԵՐ. ԾԱՂԿԱՁՈՐ – 2019

* Ընդհանուր հաշվարկով տեղերը որոշվում են՝ ըստ 2 մրցաշարերում գրաված տեղերի նվազագույն հանրագումարի: Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է արագ շախմատում զբաղեցրած տեղին:

ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Կայծակնային	5000 ՀՀ դրամ
Արագ	5000 ՀՀ դրամ
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ	անվճար

ՀՅՈՒՐԱՆՈՑ

Անվանում	Սենյակի տեսակ	Արժեքը 1 օրվա համար՝ ներառյալ 3-անգամյա սնունդ (1 անձի համար)	Արժեքը 1,5 օրվա համար՝ ներառյալ 2-րդ օրվա ճաշ (1 անձի համար)	Կապ
ԳՐՈՂՆԵՐԻ ՏՈՒՆ	Ստանդարտ	7 000 ՀՀ դրամ	8 500 ՀՀ դրամ	091 192514

Գրանցման համար դիմել Հայաստանի շախմատի ակադեմիա:
Հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, 0050, ՀՀ
Էլ. հասցե՝ chessacademyarm@gmail.com

Հեռ.՝ +374 10 44 84 79
Բջջ.՝ +374 77 44 84 73

Մրցաշարերի գրանցման վերջնաժամկետն է **ս.թ. հոկտեմբերի 1-ը, ժամը 18:00-ն:**
Մարզիկների և նրանց ուղեկցող անձանց բոլոր ծախսերը (ճանապարհածախս, օրապահիկ, հյուրանոց) հոգում է գործուղող կազմակերպությունը:

Գլխավոր գործընկեր՝ Ռոյալ Սիգնաչր ՍՊԸ